

Թուականն է 12 Հոկտեմբեր 1666: Ձայն ստորեւ կը թարգմանենք:

«Տէր Ազեֆսանդր,

Գերագոյն Պետ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ Յաջորդ՝ Վիմական հաւատփով օժտուած Երանաշնորհ Պետրոսի, Հովիւ հօրապէս հովուող Քրիստոսի բովանդակ ուղղափառ Հօտը, բոլոր երկիրներու վեհաշուք Պապ՝ որուն, ես, ամենախոնարհ ծառան Յիսուսի Քրիստոսի, Յակօր Կաթողիկոս Մեծ Հայքի, պահապան՝ Գահին Ս. Գրիգորի, մեր Լուսաւորչին, Թաղէոս Առաքելի Յաջորդին, կ'ընծայեմ հաճելի ողջոյնը Յիսուսի, եւ Տիրոջ սէրը տրուած՝ ամենայն խոնարհութեամբ, իրրեւ մեր Հոգեւոր Հօր, յուրախութիւն Սրբութեանդ ի Տէր, հանդերձ համայն եկեղեցական ժառանգաւորներովդ եւ հանուր ուղղափառ ժողովուրդներով, անասելի ցնծութեամբ. ամէն: Յետ այսու, դերագոյն պատուոյ արժանացած ձեր Տէրութիւնը գիտնայ մեր ցաւն ու դժուարութիւնները. ինչպէս բացայայտ է Ձեր երկայնամտութեան, ի վաղուց մեր Ազգէն սահաւ ժողովուրդներ կը բնակին Լեհաստան, իլխանութեան ներքեւ Յովհաննէս Գաղիմիր Թագաւորին, եւ հոն եպիսկոպոս մը կայ, նիկող անուն, իրենց Հովիւը մեր Ազգէն, եւ իրենց մէջ... աղմուկ եւ խռովութիւն: Երկար ժամանակէ ի վեր անոնք մնացին նոյն աղմուկներու եւ խռովութեան մէջ, այսինքն Եպիսկոպոսն ու ժողովուրդը: Մեր նախորդին, Փիլիպպոս Կաթողիկոսին օրով, որ Կ.